

ՍԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2018

ՖԻԶԻԿԱ

ԹԵՍ 5

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց բողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Չեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճևաքուղքը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճևաքուղքը: Պատասխանների ճևաքուղքի ճշշտ լրացումից է կախված Չեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 Ω°ր մեծությունը չի փոխվում ուղղագիծ հավասարաչափ շարժման ժամանակ:

- 1) Արագությունը:
- 2) Կոռոդինատը:
- 3) Տեղափոխությունը:
- 4) Անցած ճանապարհը:

2 Աշտարակից առաջին մարմինը նետում են հորիզոնական ուղղությամբ v_0 արագությամբ, միաժամանակ երկրորդ մարմինը պարզապես բաց են քողնում: Դրանցից ո՞րն ավելի շուտ կհասնի գետնին: Օդի դիմադրությունն անտեսել:

- 1) Պատասխանը կախված է բարձրությունից:
- 2) Առաջինը:
- 3) Երկրորդը:
- 4) Միաժամանակ:

3 Մարմինը T պարբերությամբ հավասարաչափ պտտվում է շրջանագծով: Ժամանակի որևէ պահից հաշված որքա՞ն ժամանակ անց նրա տեղափոխության մոդուլը կլինի առավելագույնը:

- 1) $2T$:
- 2) $\frac{T}{4}$:
- 3) $\frac{T}{2}$:
- 4) T :

4 Ω°ր պնդումն է սխալ:

- 1) Մարմնի զանգվածը հավասար է նրա ծավալի և խտության արտադրյալին:
- 2) Զանգվածը մարմնի իներտության չափն է:
- 3) Զանգվածը սկայար մեծություն է:
- 4) Մարմնի զանգվածն ուղիղ համեմատական է նրա վրա ազդող ուժին և հակադարձ համեմատական այդ ուժի ազդեցությամբ ձեռք բերած արագացմանը:

5 Ω°րն է ուժի միավորը՝ ըստ ՄՀ-ի հիմնական միավորների:

- 1) 1 կգ մ/վ :
- 2) 1 կգ մ/վ^2 :
- 3) 1 կգ մ :
- 4) $1 \text{ կգ մ}^2/\text{վ}^2$:

6

Զինքաշում է սայլը 500 Ն ուժով: Ի՞նչ ուժով է սայլն ազդում ձիու վրա:

- 1) Պատասխանը կախված է սայլի անիվների և գետնի միջև գործող շփման ուժի մեծությունից:
- 2) Սայլը ձիու վրա չի ազդում:
- 3) 500 Ն-ից փոքր ուժով:
- 4) 500 Ն ուժով:


7

Ինչպե՞ս է փոխվում երկու համասեռ գնդերի գրավիտացիոն փոխազդեցության ուժը նրանց միջև հեռավորությունը երկու անգամ փոքրացնելիս:

- 1) Փոքրանում է չորս անգամ:
- 2) Մեծանում է երկու անգամ:
- 3) Մեծանում է չորս անգամ:
- 4) Փոքրանում է երկու անգամ:

8

Նկարում պատկերված անկշիռ լծակը հավասարակշռության վիճակում է: Որքա՞ն է նրա վրա ազդող \vec{F}_1 և \vec{F}_2 ուժերի մոմենտների հարաբերությունը հենման կետով անցնող և նկարի հարթության ուղղահայց առանցքի նկատմամբ:



- 1) 2,5:
- 2) 0:
- 3) 0,4:
- 4) 1:

9

k կոշտությամբ զսպանակի երկարացումը 0-ից դարձավ x : Որքա՞ն է առածզականության ուժի կատարած աշխատանքը:

- 1) $-kx^2$:
- 2) kx :
- 3) $-\frac{kx^2}{2}$:
- 4) $-\frac{kx}{2}$:

10

Պողպատե գունդը բաց են թողնում որոշակի բարձրությունից: Մինչև գետին հասնելն ինչպե՞ս են փոխվում գնդի կինետիկ և պոտենցիալ էներգիաները: Օդի դիմադրությունն անտեսել:

- 1) Պոտենցիալ էներգիան չի փոխվում:
- 2) Պոտենցիալ էներգիան աճում է, կինետիկը՝ նվազում:
- 3) Կինետիկ էներգիան աճում է, պոտենցիալը՝ նվազում:
- 4) Կինետիկ էներգիան չի փոխվում:

11

Կփոխվի՞ արդյոք տախտակի վրա դրված աղյուսի ճնշումը, եթե տախտակի մի ծայրն աստիճանաբար բարձրացնենք: Աղյուսը չի սահում տախտակի վրայով:

- 1) Կմեծանա կամ կփոքրանա:
- 2) Կմեծանա:
- 3) Կփոքրանա:
- 4) Չի փոխվի:


12

Ո՞րն է ρ_1 և ρ_2 խոռոչյամբ հեղուկների մակերևույթներին լողալիս նույն մարմնի ընկողման V_1 և V_2 ծավալների ծիշտ հարաբերակցությունը:

- 1) $\frac{V_1}{V_2} < \frac{\rho_1}{\rho_2}$:
- 2) $\frac{V_1}{V_2} = \frac{\rho_1}{\rho_2}$:
- 3) $\frac{V_1}{V_2} = \frac{\rho_2}{\rho_1}$:
- 4) $\frac{V_1}{V_2} > \frac{\rho_1}{\rho_2}$:

13

Նկարում պատկերված է ներդաշնակ տատանումներ կատարող նյութական կետի $x = x_0 \sin(\omega t + \varphi_0)$ կոորդինատի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն է տատանումների φ_0 սկզբնական փուլը:



- 1) π :
- 2) $-\pi/2$:
- 3) $\pi/2$:
- 4) 0:

14


Ինչպե՞ս կփոխվի մաքենատիկական ճոճանակի ներդաշնակ տատանումների պարբերությունը, եթե նրա երկարությունը փոքրացնենք 4 անգամ:

- 1) Կփոքրանա 2 անգամ:
- 2) Կմեծանա 4 անգամ:
- 3) Կփոքրանա 4 անգամ:
- 4) Կմեծանա 2 անգամ:

15

Ո՞ր պրոցեսում է հաստատուն զանգվածով իդեալական գազի ջերմաստիճանը հասնում ավելի մեծ արժեքի:


- 1) $1 \rightarrow 5$:
- 2) $1 \rightarrow 2$:
- 3) $1 \rightarrow 3$:
- 4) $1 \rightarrow 4$:



16

Որքա՞ն է գազի կատարած աշխատանքը նկարում պատկերված շրջանային պրոցեսի արդյունքում:

- 1) $4P_0V_0$:
- 2) P_0V_0 :
- 3) $2P_0V_0$:
- 4) $3P_0V_0$:




17

Կարելի՞ է արդյոք 80°C ջերմաստիճանի ջուրը եռացնել առանց տաքացնելու:

- 1) Կարելի է, եթե այն ջերմամեկուսացնենք:
- 2) Կարելի է, եթե արտաքին ճնշումը փոքրացնենք:
- 3) Կարելի է, եթե արտաքին ճնշումը մեծացնենք:
- 4) Ոչ, քանի որ ջուրը միշտ եռում է 100°C -ում:

18

Բացասական լիցքավորված A ձողը մոտեցնում են լիցքավորված էլեկտրացույցի B գնդիկին՝ առանց հայելու նրան: Ի՞նչ լիցք կունենան էլեկտրացույցի թերթիկները:



- 1) Ազ թերթիկը՝ դրական, ձախը՝ բացասական:
- 2) Դրական:
- 3) Բացասական:
- 4) Չեն լիցքավորվի:


19

Ինչպես պետք է փոխել երկու կետային լիցքերի միջև հեռավորությունը, որպեսզի նրանցից յուրաքանչյուրի լիցքը 4 անգամ մեծացնելիս փոխազդեցության ուժը չփոխվի:

- 1) Պետք է փոքրացնել 4 անգամ:
- 2) Պետք է մեծացնել 2 անգամ:
- 3) Պետք է մեծացնել 4 անգամ:
- 4) Պետք է փոքրացնել 2 անգամ:

20

Որքա՞ն է էլեկտրական դաշտի լարվածության մոդուլը քառակուսու Օ կենտրոնում, եթե յուրաքանչյուր գագաթում տեղադրված կետային լիցքի դաշտի լարվածության մոդուլը քառակուսու կենտրոնում ունի E արժեքը:



- 1) 0:
- 2) $2E$:
- 3) $4E$:
- 4) $4,23E$:


21

Ի՞նչ միավորով է չափվում հաղորդչի էլեկտրաունակությունը միավորների UՀ-ում:

- 1) 1 V/Կ:
- 2) 1 V:
- 3) 1 Վս:
- 4) 1 Ֆ:

22


Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը: Միացնող հաղորդալարերի դիմադրությունն անտեսել:



- 1) 0 :
- 2) $2R$:
- 3) R :
- 4) $\frac{R}{2}$:

23

Ինչպես են հարաբերում նկարում պատկերված շղթայում R_1 և R_2 դիմադրություններով անցնող I_1 և I_2 հոսանքները:



- 1) $\frac{I_1}{I_2} = 1$:
- 2) $\frac{I_1}{I_2} = \frac{R_1}{R_2}$:
- 3) $\frac{I_1}{I_2} = \frac{R_2}{R_1}$:
- 4) $\frac{I_1}{I_2} = \left(\frac{R_1}{R_2}\right)^2$:

24

Ինչպե՞ս կփոխվի միավոր ժամանակում հաղորդչում անջատված զերմաքանակը, եթե, անփոփոխ պահելով լարումը, նրա դիմադրությունը մեծացնենք 3 անգամ:

- 1) Կփոքրանա 9 անգամ:
- 2) Կմեծանա 3 անգամ:
- 3) Կփոքրանա 3 անգամ:
- 4) Կմեծանա 9 անգամ:

25


Ինչպե՞ս է փոխվում մետաղի տեսակաբար դիմադրությունը զերմաստիճանը բարձրացնելիս:

- 1) Պատասխանը կախված է ազատ էլեկտրոնների կոնցենտրացիայից:
- 2) Մեծանում է:
- 3) Փոքրանում է:
- 4) Չի փոխվում:

26

Ինչո՞ւ զերմաստիճանը բարձրացնելիս էլեկտրոլիտի հաղորդականությունը մեծանում է:

- 1) Վերամիավորման հետևանքով փոքրանում է իոնների կոնցենտրացիան:
- 2) Մեծանում է էլեկտրոլիտի խտությունը:
- 3) Աճում է դիտուման հետևանքով առաջացած իոնների կոնցենտրացիան:
- 4) Աճում է իոնների զերմային շարժման միջին կինետիկ էներգան:



27

Ինչպե՞ս է ուղղված նկարում պատկերված երկու անվերջ երկար, ուղիղ, իրար զուգահեռ հոսանքակիր հաղորդալարերի արդյունարար մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորը հավասարահեռ A կետում: Հաղորդալարերում հոսանքի ուժը նույնական է ($I_1 = I_2$):

- 1) Ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է դիտողից դեպի նկարը:
- 2) Ուղղված է դեպի վերև:
- 3) Զրո է:
- 4) Ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է նկարից դեպի դիտողը:

28

Ինչպե՞ս կշարժվի լիցքավորված մասնիկը համասեռ մագնիսական դաշտում, եթե նրա սկզբնական արագությունն ուղղահայաց է մագնիսական ինդուկցիայի վեկտորին:

- 1) Պարույրագծով:
- 2) Շրջանագծով:
- 3) Պարաբոլով:
- 4) Ուղիղ գծով:

29

Պղնձե օղակի մոտ, նրա մակերևույթին ուղղահայաց տեղադրված է հաստատուն մազնիս, ինչպես ցույց է տրված նկարում: Առաջին դեպքում օղակը շարժում են դեպի ներքև, իսկ երկրորդ դեպքում՝ դեպի աջ: Ո՞ր դեպքում օղակում կմակածվի հոսանք:



- 1) Ոչ մի դեպքում:
- 2) Միայն առաջին դեպքում:
- 3) Միայն երկրորդ դեպքում:
- 4) Երկու դեպքում էլ:

30

Տատանողական կոնսուրում տեղի են ունենում չմարող էլեկտրամագնիսական տատանումներ: Ժամանակի ընթացքում ո՞ր մեծությունն է մնում անփոփոխ:

- 1) Կոճի մագնիսական դաշտի և կոնդենսատորի էլեկտրական դաշտի էներգիաների գումարը:
- 2) Կոնդենսատորի լիցքը:
- 3) Կոնդենսատորի էլեկտրական դաշտի լարվածությունը:
- 4) Կոճի մագնիսական դաշտի էներգիան:

31

Ի՞նչ երևույթի վրա է հիմնված տրանսֆորմատորի աշխատանքը:


- 1) Էլեկտրաստատիկ մակածման:
- 2) Հոսանքի մագնիսական ազդեցության:
- 3) Հոսանքի ջերմային ազդեցության:
- 4) Էլեկտրամագնիսական մակածման:

32

Առարկայի հեռավորությունը հարք հայելուց d է: Որքա՞ն է առարկայի և պատկերի միջև / հեռավորությունը:

- 1) $l > 2d$:
- 2) $l = d$:
- 3) $l = 2d$:
- 4) $l < d$:

Նկարում պատկերված են ընկնող և բեկված ճառագայթները
Ա միջավայրից Բ միջավայրն անցնելիս: Ո՞րն է այդ միջավայրերի
 n_A և n_B բեկման ցուցիչների ճիշտ հարաբերակցությունը:




- 1) Հարաբերակցությունը կախված է անկման անկյունից:
- 2) $n_A > n_B$:
- 3) $n_A < n_B$:
- 4) $n_A = n_B$:

34

Կառուցելով առարկայի պատկերը հավաքող
ոսպնյակում՝ աշակերտը սխալվեց: Ո՞րն է նրա սխալը:

- 1) A կետի պատկերի ստացման համար օգտագործվել է տարրեր կետերից դուրս եկող ճառագայթներ:
- 2) Սխալ է պատկերված A կետից դուրս եկող ճառագայթի ընթացքը:
- 3) Սխալ է պատկերված B կետից դուրս եկող ճառագայթի ընթացքը:
- 4) A և B կետերից դուրս եկող ճառագայթները չեն հատվի A₁ կետում:



35

d պարբերությամբ դիֆրակտային ցանցը լուսավորվում է նրան ուղղահայաց ընկնող λ ալիքի երկարությամբ լույսով: Ո՞ր բանաձևով կարելի է որոշել այն α անկյունը, որի դեպքում դիտվում է 2-րդ կարգի մաքսիմումը:

- 1) $\cos \alpha = \frac{d}{2\lambda} :$
- 2) $\sin \alpha = \frac{2\lambda}{d} :$
- 3) $\sin \alpha = \frac{d}{2\lambda} :$
- 4) $\cos \alpha = \frac{2\lambda}{d} :$

36

Դաղարի վիճակում ավտոմեքենայի լուսարձակմերի առաքած լույսի արագությունը գետնի նկատմամբ c է: Որքա՞ն կլինի լույսի արագությունը, եթե ավտոմեքենան շարժվի v արագությամբ:

- 1) $c+v :$
- 2) $c :$
- 3) $\frac{c}{2} :$
- 4) $c-v :$

37

Որքա՞ն է լույսի հաճախությունը, եթե ֆոտոնի էներգիան E է:

- 1) $\frac{E}{h} :$
- 2) $Eh :$
- 3) $\frac{E}{c} :$
- 4) $\frac{E}{c^2} :$

38

Ինչի՞ց է կախված լույսի ազդեցությամբ մետաղից պոկված էլեկտրոնի կինետիկ էներգիան:

- 1) Մետաղի ելքի աշխատանքից և լույսի հաճախությունից:
- 2) Միայն լույսի ուժգնությունից:
- 3) Միայն լույսի հաճախությունից:
- 4) Միայն մետաղի ելքի աշխատանքից:

39

Ինչպե՞ս է փոխվում ատոմի էներգիան, եթե էլեկտրոնը միջուկին մոտ ուղեծրից տեղափոխվում է ավելի հեռու ուղեծրի:

- 1) Կմեծանա կամ կփոքրանա:
- 2) Սեծանում է:
- 3) Փոքրանում է:
- 4) Չի փոխվում:

40

Ի՞նչ միջուկ է առաջանում ${}^4_7N + {}^2_2He \rightarrow ? + {}^1_1H$ ռեակցիայի հետևանքով, եթե ազոտի միջուկը ոմքակոծվում է α -մասնիկով:

- 1) ${}^{20}_{10}Ne$:
- 2) ${}^{17}_8O$:
- 3) ${}^{16}_8O$:
- 4) ${}^{19}_9F$:

41

Դահուկորդը դադարի վիճակից սահում է սարի զագարից $0,2 \text{ մ}/\text{վ}^2$ արագացմամբ: Որքա՞ն ճանապարհ կանցնի նաև 10 վ-ում:

42

Որքա՞ն է ուժաչափի զսպանակի կոշտությունը, եթե նրա զսպանակի երկարացումը 8 Ն ուժի դեպքում 4 մմ է:

43

Որքա՞ն աշխատանք է կատարում գազը $4 \cdot 10^5$ Պա հաստատուն ճնշման տակ 2 լ-ից մինչև 3 լ ընդարձակվելիս:

44

Որքա՞ն է $2,64 \cdot 10^{-19}$ Ջ էներգիայով ֆուռնի հաճախությունը: Պլանկի հաստատունը $6,6 \cdot 10^{-34}$ ՋՎ է: Պատասխանը բազմապատկեք 10^{-14} -ով:

- (45-46) Ապակու կտորն օդում կշռում է 7 Ն, իսկ ջրում՝ 3 Ն: Զրի խտությունը 10^3 կգ/մ³ է: Օդում արքիմեդյան ուժն անտեսել:

45

Որքա՞ն է ջրում ապակու վրա ազդող արքիմեդյան ուժը:

46

Որքա՞ն է ապակու խտությունը:

- (47-48) 0,05 կգ զուրը 700 Վտ հզորությամբ թեյնիկով անհրաժեշտ է տաքացնել 20^0C -ից մինչև 40^0C ջերմաստիճանը: Զրի տեսակարար ջերմունակությունը 4200 Վ/կգ·Կ է: Համարել, որ անջատված ողջ ջերմաքանակը ծախսվում է զրի տաքացման համար:

47

Որքա՞ն ջերմաքանակ է անհրաժեշտ զուրը տաքացնելու համար:

48

Որքա՞ն ժամանակ կպահանջվի զրի տաքացման համար:

(49-50) 15 Օմ դիմադրությամբ և 3 Հն ինդուկտիվությամբ սոլենիդի ծայրերին կիրառված է 60 Վ լարում:

49

Որքա՞ն է սոլենիդով անցնող հոսանքի ուժը:

50

Որքա՞ն է սոլենիդի մագնիսական դաշտի էներգիան:

(51-52) 0,4 մ կիզակետային հեռավորություն ունեցող հավաքող բարակ ոսպնյակից 0,2 մ հեռավորությամբ տեղադրված է առարկան:

51

Ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ կստացվի առարկայի պատկերը: Պատասխանը բազմապատկեր 10-ով:

52

Որքա՞ն է այդ դեպքում ոսպնյակի խոշորացումը:

- (53-54) 300 Վա հզրությամբ մեներանգ ճառագայթման աղբյուրը 1 վ-ում առաքում է $5 \cdot 10^{20}$ ֆոտոն: Պլանկի հաստատունը $6,6 \cdot 10^{-34}$ Ջվ է, լուսի արագությունը վակուումում՝ $3 \cdot 10^8$ մ/վ:

53

Որքա՞ն է մեկ ֆոտոնի էներգիան: Պատասխանը բազմապատկեք 10^{19} -ով:

54

Որքա՞ն է ճառագայթման ալիքի երկարությունը: Պատասխանը բազմապատկեք 10^8 -ով:

(55-57) Երկու մարմին միևնույն կետից 10 մ/վ արագությամբ նետում են ուղղաձիգ դեպի վեր՝ միմյանցից 1,2 վ ուշացումով: Ազատ անկման արագացումը 10 m/v^2 է: Օդի դիմադրությունն անտեսել:

55

Վերջինը նետելուց հետո որքա՞ն ժամանակ անց մարմինները կհանդիպեն: Պատասխանը բազմապատկեք 10-ով:


56

Նետման կետից h° նշ բարձրության վրա մարմինները կհանդիպեն: Պատասխանը բազմապատկեք 10-ով:

57

Հանդիպման պահին որքա՞ն է մարմինների արագությունների մոդուլների հարաբերությունը:

- (58-60) $F=0,8$ մ կիզակետով հավաքող բարակ ոսպնյակի ճախ կողմում գտնվում է $l=0,2$ մ երկարությամբ էջով հավասարասրուն ուղղանկյուն եռանկյուն: Եռանկյան էջերից մեկն ուղղված է ոսպնյակի գլխավոր օպտիկական առանցքով, իսկ ուղիղ անկյան գագաթը համընկնում է ոսպնյակի կրկնակի կիզակետի հետ:



58

Որքա՞ն է եռանկյան գլխավոր օպտիկական առանցքին ուղղահայաց էջի պատկերի երկարությունը: Պատասխանը բազմապատկեր 10-ով:

59

Որքա՞ն է եռանկյան գլխավոր օպտիկական առանցքի վրա գտնվող էջի պատկերի երկարությունը: Պատասխանը բազմապատկեր 10²-ով:

60

Որքա՞ն է եռանկյան և նրա պատկերի մակերեսների հարաբերությունը: Պատասխանը բազմապատկեր 10²-ով:

- (61-64) Մի ծայրը բաց ուղղանկյուն գուգահեռանիստի ձև ունեցող խողովակը կողմնային նիստով տեղադրված է հորի-

գոմական հարթության վրա, որի հետ շփման գործակիցը

0,6 է: Ողորկ, խողովակի պատերին կիպ կպած մխոցի


հեռավորությունը նրա փակ ծայրից 0,8 մ է: Մխոցը

դանդաղորեն շարժում են դեպի փակ ծայրը: Խողովակի զանգվածը մխոցի հետ 10 կգ է,

մխոցի մակերեսը՝ 10 սմ^2 : Խողովակի ներսում օդի ճնշումը սկզբում հավասար է մքնո-

լորտային ճնշմանը: Մքնոլորտային ճնշումը 10^5 Պա է: Չերմաստիճանը հաստատուն է:

Ազատ անկման արագացումը 10 մ/վ^2 է:



61

Որքա՞ն է խողովակի վրա ազդող դադարի շփման ուժի առավելագույն արժեքը:

62

Որքանո՞վ է մեծանում է զագի ճնշումը խողովակում այն պահին, երբ խողովակն սկսում է տեղից շարժվել: Պատասխանը բազմապատկեր 10^{-4} -ով:

63

Որքանո՞վ է տեղաշարժվում մխոցն այն պահին, երբ խողովակը տեղից շարժում է: Պատասխանը բազմապատկեր 10 -ով:

64

Սկզբնական դիրքից մխոցը որքա՞ն պետք է դանդաղորեն տեղաշարժել դեպի բաց ծայրը, որպեսզի խողովակը սկսի տեղաշարժվել դեպի բաց ծայրը: Պատասխանը բազմապատկեր 10 -ով:

- (65-68) Հարք կոնդենսատորը, որի թիթեղների հեռավորությունը 4 սմ է, լիցքավորված է մինչև 4 կՎ լարումը: Կոնդենսատորի դրական թիթեղից դաշտի ուղղությամբ առանց սկզբնական արագության շարժվում է $0,1$ գ զանգվածով և 10^{-10} Կլ լիցքով մասնիկը: Սի որոշ տարածություն անցնելուց հետո կտրուկ փոխվում են կոնդենսատորի թիթեղների լիցքերի նշանները: Եթե մասնիկը հասնում է մյուս թիթեղին, նա ունենում է $24 \cdot 10^{-8}$ Զ կինետիկ էներգիա: Ծանրության ուժն աճտեսել:

65

Ի՞նչ հեռավորություն է անցել մասնիկը թիթեղների լիցքերի նշանները փոխվելու պահին: Պատասխանը բազմապատկեք 10^3 -ով:

66

Որքա՞ն է մասնիկի արագացման մոդուլը: Պատասխանը բազմապատկեք 10 -ով:

67


Ի՞նչ արագություն է ունեցել մասնիկը թիթեղների լիցքերի նշանները փոխվելու պահին: Պատասխանը բազմապատկեք 10^2 -ով:

68

Ծարժումն սկսելուց որքա՞ն ժամանակ հետո են փոխվել թիթեղների լիցքերի նշանները: Պատասխանը բազմապատկեք 10 -ով:

69

- m* զանգվածով բեռը շարժական ճախարակի օգնությամբ \vec{F} ուժով բարձրացնում են *h* բարձրության վրա (նկ. 1): Ճախարակի և բելի զանգվածներն անտեսել: Հաստատե՛ք կամ ժխտե՛ք հետևյալ պնդումները:




Նկ. 1

- 1) Ճախարակի ՕԳ.Գ.-ն $\frac{mg}{2F}$ է:
- 2) Շարժական ճախարակ կիրառելիս շահում ենք ուժի մեջ, կորցնում՝ ճանապարհի մեջ:
- 3) Բեռը բարձրացնելիս կատարված օգտակար աշխատանքը mgh է:
- 4) Բեռը բարձրացնելու համար միշտ անհրաժեշտ է, որ F ուժը մեծ լինի mg -ից:
- 5) Եթե բեռը բարձրացնում ենք *h* չափով, բելի ազատ ծայրը տեղափոխվում է *h*-ով:
- 6) Բեռը բարձրացնելիս կատարված լրիվ աշխատանքը $2hF$ է:

70

- Հաստատուն զանգվածով իդեալական գազի հետ ընթացող պրոցեսը V-T կոորդինատային համակարգում պատկերված է նկ. 2-ում: Հաստատե՛ք կամ ժխտե՛ք հետևյալ պնդումները:



Նկ.2

- 1) Պրոցեսի ընթացքում գազն արտաքին մարմիններից ջերմաքանակ է ստանում:
- 2) Գազի ջերմաստիճանը պրոցեսի ընթացքում մնում է հաստատուն:
- 3) Պրոցեսի ընթացքում գազի ճնշումը նվազում է:
- 4) Պրոցեսի ընթացքում գազի մոլեկուլների միջին կինետիկ էներգիան չի փոխվում:
- 5) Պրոցեսի ընթացքում գազի ներքին էներգիան աճում է:
- 6) Պրոցեսի ընթացքում գազն արտաքին ուժերի դեմ կատարում է դրական աշխատանք: